«Քաղաքապետը» հարցաշարի միջոցով մինչև 17.09.2023 հավաքագրված տվյալների ընդհանրացված արդյունքները

«Քաղաքապետը» հարցաշար-գործիք է[1], որի միջոցով Երևանի ավագանու առաջիկա ընտրություններին ընդառաջ փորձ է արվել ուրվագծել առավել գերակա քաղաքային գաղափարախոսությունները: Գործիքը բաղկացած է 10 հարց-իրավիճակից, որոնց ընտրությունը հնարավորություն է տվել դուրս բերել հարցաշարը լրացնողների՝ քաղաքային պլանավորման վերաբերյալ գաղափարական մոտեցումները: Ընդհանուր առմամբ, մինչև Երևանի ավագանու ընտրությունների օրը (17.09.2023 թ.) առցանց հարցմամբ գեներացվել է 2685 պատասխան:

Ստորև ներկայացվող ամփոփ տվյալները միայն հարցման մասնակիցների պատասխանների նկարագրությունն են, տվյալները տարածելի չեն հասարակության այլ անդամների վրա:

Հարցման մասնակիցների նկարագիրը

Առցանց հարցման մասնակիցների շարքում իգական սեռի ներկայացուցիչները (82.9%) գերակշռում են արական սեռի ներկայացուցիչներին (12.7%), հարցվողների 4.4%-ը նախընտրել է չնշել սեռը:



Հարցման մասնակիցների գերակշիռ մեծամասնությունը երիտասարդներ են՝ 18-35 տարեկան (82.8%), մինչև 17 տարեկանները կազմում են 11.0%, իսկ 36 և ավելի տարեկանները՝ 6.2%:

[1] Հարցաշար-գործիքը մշակված է (մշակողներ՝ Հ. Վերմիշյան և Ա. Ղալամդարյան) հայտնի ուրբանիստներ Ռոբերտ Մոզեսի և Յան Գեյլի, հասարակական ակտիվիստ Ջեյն Ջեքոբսի և քաղաքի տեսաբաններ Հենրի Լեֆեվրի ու Դեյվիդ Հարվիի աշխատությունների հիման վրա: Սույն գործիքը ստեղծվել է «Քաղաքական երկխոսություն» ՀԿ-ի կողմից: Ծրագիրը հնարավոր է դարձել «Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի» օժանդակության շնորհիվ:



Հարցվածների մեծ մասն են կազմում երևանաբնակները՝ 68.2%, իսկ 19.8%-ը հայաստանյան որևէ այլ քաղաքի, 12.0%-ը գյուղի բնակիչ է:



Երևանից հարցմանը մասնակցել են քաղաքի բոլոր վարչական շրջաններից բնակիչներ (բաշխումը՝ Գծապատկեր 4-ում):



Գրանցված աշխատող է մասնակիցների մեծ մասը՝ 47.8%, ինքնազբաղված է 14.9%-ը, չի աշխատում 13.1%-ը: 0.2%-ն ունի հաշմանդամություն, իսկ 24.0%-ը նշել է այլ տարբերակ:



Հարցվողների կեսից ավելին (52.1%) քաղաքում տեղաշարժվելու համար ամեն օր կամ գրեթե ամեն օր օգտվում է հանրային տրանսպորտից, իսկ 18.1%-ը երբեք կամ գրեթե երբեք, մնացածն առավել հազվադեպ են օգտվում:



Սրան զուգահեռ տեսնում ենք, որ մեքենա չի վարում հարցվածների գերակշիռ մեծամասնությունը՝ 83.1%, համապատասխանաբար 16.9%-ն ունի որոշակի վարորդական ստաժ:



Երևանի ավագանու ընտրություններին ընդառաջ հարցվածները պատասխանել են, թե արդյոք պատրաստվում են մասնակցել: Հարցման պահի դրությամբ ընտրություններին մասնակցելու մտադրություն չի ունեցել 47.6%-ը, 52.4%-ը պատրաստվում էր մասնակցել:



Խաղի (հարցման) արդյունքները

Ստորև ներկայացված են խաղի արդյունքները՝ մասնակիցների բաշխումն ըստ յուրաքանչյուր սցենարի համար ընտրված պատասխանների:

Այսպիսով, քաղաքում կառուցապատում իրականացնելու սցենարի դեպքում մասնակիցների մեծ մասի (74.3%) համար նախընտրելի է եղել համագործակցային տարբերակը (հիփսթերական), մի մասը (15.3%) կարծում է, որ որոշումների միանշանակ պետք է կայացնի քաղաքապետարանը՝ որպես կառավարման մարմին (աջ), ավելի փոքր տոկոսի (10.4%) համար նախընտելին հենց բնակիչների կողմից որոշում կայացնելու տարներակն է (ձախ%) (տե՛ս գծապատկեր 2.1):



Որպես ավտոմեքենաների աճող թվից բխող խնդիրների լուծում՝ հարցվածների 48.0%-ի համար ամենացանկալի տարբերակը նոր մայրուղիների, ավտոկայանատեղիների կառուցումն է (աջ), 34.4%-ը կողմնակից է ավտոմեքենաների երթևեկության որոշակի սահմանափակումների՝ հետիոտնային և հեծանվային տեղաշարժման խրախուսմամբ (հիփսթերական), իսկ 17.6%-ը դրական լուծում է համարում հանրային տրանսպորտի ցանցի զարգացումը՝ անձնական ավտոմեքենաների կտրուկ կրճատման հաշվին (ձախ) (տե՛ս գծապատկեր 2.2):



Քաղաքի տարբեր հատվածներում անվտանգության ապահովման հարցում խաղի մասնակիցների զգալի մասը (66.4%) նախապատվություն է տվել աջ ուրբանիստական լուծմանը՝ անվտանգությունը տալ մասնավոր/կոմերցիոն ընկերության, հիփսթերական և ձախական լուծումներին հակված հարցվողներն ավելի քիչ տոկոս են կազմում՝ բաշխվելով հավասարապես (16.8%-ական) (տե՛ս գծապատկեր 2.3):



Առցանց հարցմանը մասնակցածների մեծ մասը՝ 79.8%, քաղաքի հին թաղամասերի խնդրի հետ կապված կնախընտրեր տեսնել տարածության վերակազմակերպման, համագործակցային ճանապարհով նոր շունչ տալու լուծումներ (հիփսթերական): 13.1%-ի համար ցանկալի տարբերակը նման թաղամաս/երի քանդումն է և տեղում ժամանակակից շենքերի կառուցումը (աջ): Ամենաքիչ՝ 7.1%, պատասխաններ ստացել է ձախ գաղափարախոսության վրա հիմնված լուծումը, ըստ որի նախընտրելին հնի պահպանությունն է՝ առանց էական միջամտությունների (տե՛ս գծապատկեր 2.4):



Ներկայացված նկարները վիզուալացնում են երեք տարբեր քաղաքային միջավայր՝ առավելապես ուղղված համապատասխանաբար դեպի տեխնոլոգիաները, դեպի մարդը և դեպի բնությունը: Խաղի արդյունքներով ամենագրավիչը բնության հետ համակցված միջավայրն է՝ 55.4%: Մասնակիցներից շատերի (37.8%) համար էլ նախտնրելի է եղել հիփսթերական տարածությունը, որտեղ առաջնային է հետիոտնային և/կամ հեծանվային տեղաշարժը, հարմարավետությունը: Միայն 6.9%-ն է ամենագրավիչը համարել երկնաքերերով մեգապոլիսային տարածությունը, որն առավել բնորոշ է աջ գաղափարախոսությամբ քաղաքին (տե՛ս գծապատկեր 2.5):



Նկար1

Նկար 2

Նկար 3

Հարցվածների մեծամասնությունը (58.5%) քաղաքային զարգացումների համատեքստում ամենակարևոր համարել է արդարության սկզբունքը (ձախ), մի մասի (36.2%) համար առաջնայինը քաղաքաբնակների համար հաճելի միջավայր ապահովելու, հարմարավետության սկզբունքն է: Մասնակիցների կողմից ամենաքիչը (5.3%) կարևորված է բարեկեցության, շքեղության սկզբունքն է (տե՛ս գծապատկեր 2.6):

Գծապատկեր 2.6. Ձեր կարծիքով, քաղաքի զարգացման հետ կապված ո՞ր սկզբունքն է ապահովում քաղաքի ապագային ուղղված առավել ցանկալի ճանապարհ:



Հարցման մասնակիցների 61.2%-ի կարծիքով, քաղաքային իշխանությունները ներդրումների մեծ մասը պետք է ուղղեն հանրային ծառայությունների զարգացմանը, շրջակա միջավայրի պահպանությանը (20.0%) և տեխնոլոգիական զարգացմանն ուղղված ներդրումների (18.8%) իրականացումը պակաս կարևորում է ստացել (տե՛ս գծապատկեր 2.7):

Գծապատկեր 2.7. Գոյություն ունի տարակարծություն՝ կապված քաղաքի զարգացմանն ուղղված ներդրումների պլանավորման հետ: Ըստ Ձեզ, ո՞րը պետք է լինեն քաղաքային իշխանության առաջնահերթությունը:



Նոր թաղամաս տեղափոխվելու սցենարի պարագայում մասնակիցների զգալի մեծամասնությունը (69.5%) նշել է, որ հատկապես կկարևորեր հաճելի ու հարմարավետ հանրային գոտիների առկայությունը (հիփսթերական), 21.7%-ի համար առավել առաջնայինը կլինի ավանդույթներ, սերտ հարևանային հարաբերությունների գոյությունը (ձախ), իսկ 8.8%-ը կնախընտրեր տեղափոխվել առանձնացված նորակառույց թաղամաս (աջ) (տե՛ս գծապատկեր 2.8):

Գծապատկեր 2.8. Եթե տեղափոխվեք նոր թաղամաս, ինչի՞ն կտաք առաջնահերթ կարևորություն:



Փորձ է արվել նախորդ հարցը նաև վիզուալացնել: Այս դեպքում հարցվածների 57.9%-ը նշել է, որ կնախընտրեր ապրել 3-րդ նկարում, որը պատկերում է ձախ գաղափարախոսությանը հարող միջավայր, 38.7%-ի համար ավելի նախընտրելի է 2-րդ նկարում պատկերված քաղաքային տարածությունը՝ հիփսթերականության սկզբունքներով գործող, և միայն 3.4%-ն է պատասխանել, որ կցանկանար ապրել 1-ին նկարում պատկերված վայրում՝ աջ գաղափարախոսությանը հարող (տե՛ս գծապատկեր 2.9):

Գծապատկեր 2.9. Ներքոնշյալ նկարներում պատկերված ո՞ր թաղամասում կապրեիք:



Նկար1

Նկար 2

Նկար 3

Սցենարներից մեկով առաջարկվում էր ընտրել առավել ճիշտ լուծումը չգործող արդյունաբերական ներուժ ունեցող, բայց նաև մեծ ռիսկեր պարունակող գործարանի հետագա գոյության ռազմավարության հետ կապված: Գրեթե հավասարապես նախընտրելի են եղել հիփսթերական (38.1%) և ձախական (38.7%) հիմքերով մոտեցումները, որոնք համապատասխանաբար առաջարկում են չգործարկել թաղամասը (սակայն նոր շունչ տալ տարածությանը) և քանդել գործարանը (տարածքը դարձնել հանրային կանաչ գոտի): Իսկ մասնակիցների 23.2%-ը կարծում է, որ ամենաճիշտ մոտեցումը գործարանի վերաբացումն է, որպեսզի այն նպաստի տնտեսական աճին (տե՛ս գծապատկեր 2.10):



Ամփոփում

Հարցման արդյունքների ընդհանրացմամբ կարող ենք նկատել, որ հարցման մասնակիցները 74,8% դեպքերում նախապատվությունը տվել են «Երրորդ և/կամ հիփսթերական» ուրբանիզմի դրույթներին, 18,1%-ը՝ «Նոր և/կամ ձախ» ուրբանիզմի, և միայն 7,1%-ը՝ «Մոդեռնիստական և/կամ աջ» ուրբանիզմի (տե՛ս գծապատկեր 3.1)[2]:



[2] Գծապատկերում նշված են միայն այն տվյալները, երբ հարցվողը 10-ը հարցերից առնվազն 5-ի դեպքում նախընտրել է գաղափարախոսություններից որևէ մեկը:

Այս կամ այն գաղափարախոսությունը բնութագրող մոտեցումներին հակվածությունը վիճակագրական նշանակալիությամբ կապված է մի շարք գործոնների հետ: Մասնավորապես, եթե դիտարկենք հարցվողների սեռը, տեսնում ենք, որ հարցվածների շրջանում արական և իգական սեռի ներկայացուցիչները գրեթե հավասարապես են հակված հիփսթերական գաղափարախոսությանը, սակայն ձախ քաղաքային մոտեցումներին ավելի մոտ են իգական սեռի հայացքները, իսկ աջ գաղափարախոսությանը ավելի մոտ են արական սեռի հարցվողների հայացքները (տե՛ս գծապատկեր 3.2):

Գծապատկեր 3.2. Հարցվողների բաշխումն ըստ քաղաքային գաղափարախոսությունների և սեռի (%), N=1995



Նույն տրամաբանությամբ հիփսթերական գաղափարախոսությանը հակվածությանը բավականին մոտ են ՀՀ տարբեր բնակավայրերում ապրող հարցվածների պարագայում: Հարցված գյուղաբնակներն զգալի մասը հակված է ձախ գաղափարախոսությանը, երևանաբնակներն՝ ավելի շատ աջ գաղափարախոսությանը (տե՛ս գծապատկեր 3.23h:

Գծապատկեր 3.3. Հարցվողների բաշխումն ըստ քաղաքային գաղափարախոսությունների և բնակավայրի (%), N=2077



Քաղաքային գաղափարախոսություններին հակվածությունը վիճակագրական կապի մեջ է նաև հանրային տրանսպորտից օգտվելու հաճախականության հետ: Հանրային տրանսպորտից հաճախ օգտվող հարցվածներն առավել շատ (հիփսթերականությունից հետո, որը դարձյալ բոլորի դեպքում կազմում է մեծամասնություն) ընտրում են «ձախական» մոտեցումները, իսկ

երբեք չօգտվող հարցվածներն ավելի հակված են «աջական» մոտեցումներին (տե՛ս գծապատկեր 3.4):



Ընդհանուր առմամբ, բոլոր երեք քաղաքային գաղափարախոսությունների դեպքում էլ կարելի է առանձնացնել հարցվածների կողմից առավել նախընտրելի բնութագրիչներ: Ստորև ըստ քաղաքային գաղափարախոսությունների ներկայացնում ենք առավել լայն հանրային հավանություն ստացած մոտեցումները.

Երրորդ և/կամ հիփսթերական ուրբանիզմ

«Քաղաքի թաղամասերից մեկին կից բանուկ հատվածը որոշել են կառուցապատել: Ըստ Ձեզ, կառուցապատման ո՞ր մոտեցումն է առավել նախընտրելի:» հարցին հարցվողների 74,6%-ը պատասխանել է՝

- Որոշումները պետք է կայացվեն համագործակցելով մի կողմից տնտեսվարողների հետ, մյուս կողմից՝ տեղացի արվեստագետների, ճարտարապետների, քաղաքային հարցերով զբաղվող փորձագետների որոնք տաղամասի յուրահատկությանը համապատասխան լուծումներ կգտնեն: Այս մոտեցումը կարող է ժամանակատար և շատ ծախսատար լինել:

«Քաղաքի կենտրոնի հին թաղերից մեկը գտնվում է շատ անմխիթար վիճակում՝ թափառող կենդանիներ, անբարեկարգ, վատ վիճակում գտնվող ենթակառուցվածքներ: Ըստ Ձեզ, ո՞ր սցենարն է առավել նախընտրելի:» հարցին հարցվողների 80%-ը պատասխանել է՝

- Պետք է նոր շունչ տալ տարածքին՝ նախևառաջ այն վերակազմակերպելու միջոցով: Այդ գործընթացը պետք է ընթանա տեղի բնակիչների և մասնավոր բիզնեսների ներգրավմամբ, ինչի արդյունքում կստեղծվի ժամանցային հաճելի և գրավիչ թաղամաս:

«Գոյություն ունի տարակարծություն՝ կապված քաղաքի զարգացմանն ուղղված ներդրումների պլանավորման հետ: Ըստ Ձեզ, ո՞րը պետք է լինեն քաղաքային իշխանության առաջնահերթությունը:» հարցին հարցվողների 61,7%-ը պատասխանել է՝

- Ներդրումների մեծ մասը պետք է ուղղել հանրային ծառայությունների, (մասնավորապես առողջապահական և կրթական հաստատությունների) զարգացմանը՝ առաջնահերթություն տալով մարդկանց կյանքի որակի բարձրացմանը: Այս պարագայում կարևոր են նաև հետիոտների համար հարմար ու հաճելի մայթերի, ինչպես նաև մշակութային կետերի ձևավորումը:

«Եթե տեղափոխվեք նոր թաղամաս, ինչի՞ն կտաք առաջնահերթ կարևորություն:» հարցին հարցվողների 69,5%-ը պատասխանել է՝

- Ժամանցի և հանգստի հանրային գոտիներ ունեցող թաղամաս, որտեղ տեղի բնակիչներն ու այցելուները առանց իրար վերահսկելու և/կամ խանգարելու բնակվում են և անցկացնում իրենց ժամանցը:

«Մի քանի տասնամյակ է, ինչ չի գործում քաղաքի արդյունաբերական մեծ ներուժ ունեցող գործարաններից մեկը, որի գործարկումը ռիսկային է միջավայրի աղտոտման և բնակիչների առողջության տեսանկյունից: Ըստ Ձեզ, քաղաքային իշխանությունների ո՞ր ռազմավարությունն է առավել նախընտրելի:» հարցին հարցվողների 38,1%-ը պատասխանել է՝

- Չգործարկել գործարանը՝ դրա տարածքը վերածելով քաղաքաբնակներին հաճելի և հարմար ժամանցային ու առևտրային գոտիների, ինչը նաև շահույթ կբերի քաղաքին ու փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչներին:

Նոր և/կամ ձախ

«Ներքոնշյալ նկարներում պատկերված ո՞ր քաղաքային միջավայրն է առավել գրավիչ Ձեզ համար:» հարցին հարցվողների 55,4%-ը պատասխանել է՝

-

«Ձեր կարծիքով, քաղաքի զարգացման հետ կապված ո՞ր սկզբունքն է ապահովում քաղաքի ապագային ուղղված առավել ցանկալի ճանապարհ:» հարցին հարցվողների 58,8%-ը պատասխանել է՝

- Կարևորը արդար ապրելակերպն է, որում առաջնահերթությունը բոլորի համար հավասար հասանելիության ապահովումն է: Քաղաքային իշխանությունները պետք է ապահովեն մատչելի բնակարաններ, նպաստեն խոցելի խմբերի տնտեսական հզորացմանը:

«Մի քանի տասնամյակ է, ինչ չի գործում քաղաքի արդյունաբերական մեծ ներուժ ունեցող գործարաններից մեկը, որի գործարկումը ռիսկային է միջավայրի աղտոտման և բնակիչների առողջության տեսանկյունից: Ըստ Ձեզ, քաղաքային իշխանությունների ո՞ր ռազմավարությունն է առավել նախընտրելի:» հարցին հարցվողների 38,6%-ը պատասխանել է՝

- Քանդել գործարանը՝ տարածքը վերածելով կանաչ գոտու, ինչը կբարելավի քաղաքի էկոլոգիան:

«Ներքոնշյալ նկարներում պատկերված ո՞ր թաղամասում կապրեիք:» հարցին հարցվողների 58,1%-ը պատասխանել է՝

-

Մոդեռնիստական և/կամ աջ

«Քաղաքում ավտոմեքենաների քանակը կտրուկ աճել է, որը հանգեցրել է խցանումների: Ըստ Ձեզ, ո՞ր մոտեցումն է առավել խրախուսելի:» հարցին հարցվողների 47,9%-ը պատասխանել է՝

- Պետք է կառուցել նոր մայրուղիներ և ճանապարհներ՝ տրանսպորտային միջոցների աճող թվին տեղավորելու համար: Ստեղծել ավելի շատ կայանատեղեր քաղաքի կենտրոնում և խրախուսել ավտոմեքենաների փոխադրումը:

«Նոր վերա/կառուցված այգու անվտանգության ապահովման համար քաղաքային իշխանությունները քննարկում են երեք տարբերակ: Ըստ Ձեզ, ո՞ր մոտեցումն է առավել նախընտրելի:» հարցին հարցվողների 66,2%-ը պատասխանել է՝

- Պետք է այգու կառավարումը տալ որևէ մասնավոր ընկերության, որը կապահովի այգու պահպանությունն ու անվտանգությունը: Սակայն այս դեպքում այգին կօգտագործվի նաև կոմերցիոն նպատակներով:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆՈՐ ՈՒՐԲԱՆԻԶՄ	ՀԻՓՍԹԵՐԱԿԱՆ ՈՒՐԲԱՆԻԶՄ	ՄՈԴԵՌՆԻՍՏԱԿԱՆ ՈՒՐԲԱՆԻԶՄ
18.1%	74.8%	7.1%

Ըստ սեռի



Ըստ հանրային տրանսպորտից օգտվելու հաճախականության



Հարցաշարը լրացնողները՝

Ըստ տարիքի



Ըստ զբաղվածության



Ըստ ընտրություններին մասնակցության



ՔԱՂԱՔԻ ԹԱՂԱՄԱՍԵՐԻՑ ՄԵԿԻՆ ԿԻՑ ԲԱՆՈՒԿ ՀԱՏՎԱԾԸ ՈՐՈՇԵԼ ԵՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏԵԼ ԸՍՏ ՁԵՌ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ Ո՞Ր ՄՈՏԵՑՈՒՄՆ Է ԱՌԱՎԵԼ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ

10.4%

Որոշումները պետք է կայացնեն բնակիչները, քանի որ նրանք որպես տեղացիներ կրում են անմիջական ազդեցություն: Սա կերկարաձգի գործընթացը, ինչպես նաև համայնքի տարբեր խմբերի միջև անհամաձայնությունների մեծ հավանականություն կառաջացնի:

ՆՈՐ ՈՒՐԲԱՆԻԶՄ

74.3%

Որոշումները պետք է կայացվեն համագործակցելով մի կողմից տնտեսվարողների հետ, մյուս կողմից՝ տեղացի արվեստագետների, ճարտարապետների, քաղաքային հարցերով զբաղվող փորձագետների որոնք տաղամասի յուրահատկությանը համապատասխան լուծումներ կգտնեն: Այս մոտեցումը կարող է ժամանակատար և շատ ծախսատար լինել:

ՀԻԲՐԻԴԱԿԱՆ ՈՒՐԲԱՆԻԶՄ

15.3%

Որոշումները պետք է կայացնի քաղաքապետարանը, քանի որ տիրապետում է համապարփակ տեղեկատվության, ունի կառավարման փորձ: Նա մասնագետների հետ պետք է որոշի՝ որ տնտեսվարողներին և ինչպես ներգրավել առավել լավ արդյունք ստանալու համար: Այս դեպքում լսելի չի լինի տեղի բնակչության ձայնը:

ՄՈԴԵՌՆԻՍՏԱԿԱՆ ՈՒՐԲԱՆԻԶՄ

Ըստ զբաղվածության



Ըստ հանրային տրանսպորտից օգտվելու հաճախականության



ՔԱՂԱՔՈՒՄ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԿՏՐՈՒԿ ԱՃԵԼ Է, ՈՐԸ ՀԱՆԳԵՑՐԵԼ Է ԽՑԱՆՈՒՄՆԵՐԻ: ԸՍՏ ՁԵԶ, Ո՞Ր ՄՈՏԵՑՈՒՄՆ Է ԱՌԱՎԵԼ ԽՐԱԽՈՒՍԵԼԻ

17.6%

Պետական հարկերի, արգելանքների հիման վրա պետք է կտրուկ կրճատել ավտոմեքենաների քանակը՝ առկա ճանապարհներն ու մայրուղիները ծառայեցնելով հանրային տրանսպորտի ցանցի զարգացմանը:

ՆՈՐ ՈՒՐԲԱՆԻԶՄ

34.4%

Պետք է ավելի շատ փողոցներ դարձնել ոչ երթևեկելի, օրվա որոշ ժամերին արգելել ավտոմեքենաների մուտքը կենտրոնական հատվածներ, իսկ մարդկանց տեղաշարժն ապահովել՝ խթանելով հետիոտնային, հեծանվային ուղիները:

ՀԻՓՍԹԵՐԱԿԱՆ ՈՒՐԲԱՆԻԶՄ

48%

Պետք է կառուցել նոր մայրուղիներ և ճանապարհներ՝ տրանսպորտային միջոցների աճող թվին տեղավորելու համար: Ստեղծել ավելի շատ կայանատեղեր քաղաքի կենտրոնում և խրախուսել ավտոմեքենաների փոխադրումը:

ՄՈԴԵՌՆԻՍՏԱԿԱՆ ՈՒՐԲԱՆԻԶՄ

Ըստ զբաղվածության



Ըստ մեքենա վարելու



ՎԱՐՈՒՄ ԵՄ



ՉԵՄ ՎԱՐՈՒՄ

ՆՈՐ ՎԵՐԱ/ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՅԳՈՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՆ ԵՐԵՔ ՏԱՐԲԵՐԱԿ: ԸՍՏ ՁԵՋ, Ո՞Ր ՄՈՏԵՑՈՒՄՆ Է ԱՌԱՎԵԼ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ

16.8%

Պետք է այգու վերահսկողությունը հանձնել հարակից բակերի բնակիչներին, ովքեր կօգտագործեն այգին ժամանցի նպատակով և կհոգան այգու անվտանգությունն ու ապահովությունը: Սակայն այս դեպքում այգին ավելի շուտ կդառնա բակային միջավայր, քան հանրային գոտի:

ՆՈՐ ՈՒՐԲԱՆԻԶՄ

16.8%

Պետք չէ որևէ հսկողություն, յուրաքանչյուրը պետք է իրեն հնարավորինս ազատ և անկաշկանդ զգա, այցելուներն իրար կվերահսկեն: Սակայն այս դեպքում օրվա որոշ ժամերին այգին կարող է անվտանգ չլինել:

ՀԻՓՍԹԵՐԱԿԱՆ ՈՒՐԲԱՆԻԶՄ

66.4%

Պետք է այգու կառավարումը տալ որևէ մասնավոր ընկերության, որը կապահովի այգու պահպանությունն ու անվտանգությունը: Սակայն այս դեպքում այգին կօգտագործվի նաև կոմերցիոն նպատակներով:

ՄՈԴԵՌՆԻՍՏԱԿԱՆ ՈՒՐԲԱՆԻԶՄ

Ըստ զբաղվածության



Ըստ Երևանի վարչական շրջանների



ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՆ ԹԱՂԵՐԻՑ ՄԵԿԸ ԳՏՆՎՈՒՄ Է ՇԱՏ ԱՆՄԽԻԹԱՐ ՎԻՃԱԿՈՒՄ՝ ԹԱՓԱՌՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ, ԱՆԲԱՐԵԿԱՐԳ, ՎԱՏ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ: ԸՍՏ ՁԵԶ, Ո՞Ր ՍՑԵՆԱՐՆ Է ԱՌԱՎԵԼ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ

7.1%

Պետք չէ անել որևէ փոփոխություն, այլ հնարավորություն տալ, ըստ անհրաժեշտության աջակցել տեղի բնակիչներին՝ իրենց տարածքը բարեկարգելու և իրենց սովոր միջավայրում ապրել շարունակելու համար:

ՆՈՐ ՈՒՐԲԱՆԻԶՄ

79.8%

Պետք է նոր շունչ տալ տարածքին՝ նախև առաջ այն վերակազմակերպելու միջոցով: Այդ գործընթացը պետք է ընթանա տեղի բնակիչների և մասնավոր բիզնեսների ներգրավմամբ, ինչի արդյունքում կստեղծվի ժամանցային հաճելի և գրավիչ թաղամաս:

ՀԻՓՍԹԵՐԱԿԱՆ ՈՒՐԲԱՆԻԶՄ

13.1%

Պետք է քանդել թաղամասը՝ բնակիչներին տրամադրելով համարժեք ֆինանսական և բնակարանային փոխհատուցում: Միաժամանակ, պետք է կառուցել նոր ժամանակին համահունչ ենթակառուցվածքներով թաղամաս:

ՄՈԴԵՌՆԻՍՏԱԿԱՆ ՈՒՐԲԱՆԻԶՄ

Ըստ տարիքային խմբի

ՄԻՆՉԵՎ 17	18-25	26-35	36 ԵՎ ԱՎԵԼ
5.5%	6.6%	7.5%	12.7%
75.3%	81.2%	81.3%	69.1%
19.2%	12.2%	11.2%	18.2%

Ըստ մեքենա վարելու



ՎԱՐՈՒՄ ԵՄ



ՉԵՄ ՎԱՐՈՒՄ

ՆԵՐՔՈՆՇՅԱԼ ՆԿԱՐՆԵՐՈՒՄ ՊԱՏԿԵՐՎԱԾ Ո՞Ր ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՆ Է ՌԱՎԵԼ ԳՐԱՎԻՉ ՁԵԶ ՀԱՄԱՐ

55.4%

ՆՈՐ ՈՒՐԲԱՆԻԶՄ

37.8%

ՀԻՓՍԹԵՐԱԿԱՆ ՈՒՐԲԱՆԻԶՄ

6.9%

ՄՈԴԵՌՆԻՍՏԱԿԱՆ ՈՒՐԲԱՆԻԶՄ

Ըստ զբաղվածության



Ըստ Երևանի վարչական շրջանների



ՁԵՐ ԿԱՐԾԻՔՈՎ, ՔԱՂԱՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ Ո՞Ր ՍԿԶԲՈՒՆՔՆ Է ԱՊԱՀՈՎՈՒՄ ՔԱՂԱՔԻ ԱՊԱԳԱՅԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՎԵԼ ՑԱՆԿԱԼԻ ՃԱՆԱՊԱՐՀ

58.5%

Կարևորը արդար ապրելակերպն է, որում առաջնահերթությունը բոլորի համար հավասար հասանելիության ապահովումն է: Քաղաքային իշխանությունները պետք է ապահովեն մատչելի բնակարաններ, նպաստեն խոցելի խմբերի տնտեսական հզորացմանը:

ՆՈՐ ՈՒՐԲԱՆԻԶՄ

36.2%

Կարևորը հաճելի ապրելակերպն է, որում առաջնահերթությունը մարդու հարմարավետությունն է: Քաղաքային իշխանությունները հիմնականում պետք է բարելավեն քայլուղիները, պուրակներն ու ժամանցի գոտիները:

ՀԻՓՍԹԵՐԱԿԱՆ ՈՒՐԲԱՆԻԶՄ

5.3%

Կարևորը բարեկեցիկ ապրելակերպն է: Քաղաքային իշխանությունները պետք է խթանեն բարձրակարգ ու շքեղ առևտրային կենտրոնների, զվարճանքի վայրերի զարգացումը: Քաղաքային պլանավորման առաջնահերթությունը տնտեսական աճը պետք է լինի:

ՄՈԴԵՌՆԻՍՏԱԿԱՆ ՈՒՐԲԱՆԻԶՄ

Ըստ հանրային տրանսպորտից օգտվելու հաճախականության



Ըստ մեքենա վարելու



ՎԱՐՈՒՄ ԵՄ



ՉԵՄ ՎԱՐՈՒՄ

ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՊՎԱԾ ՔԱՂԱՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ: ԸՍՏ ՁԵԶ, Ո՞ՐԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԵՆ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ

20%

Ներդրումների մեծ մասը պետք է ուղղել շրջակա միջավայրի պահպանմանը՝ առաջնահերթություն տալով կանաչ տարածքների պաշտպանությանը, հեծանվուղիների և հանրային տրանսպորտի ստեղծմանը և զարգացմանը՝ անձնական ավտոմեքենաների փոխարեն:

ՆՈՐ ՈՒՐԲԱՆԻԶՄ

61.2%

Ներդրումների մեծ մասը պետք է ուղղել հանրային ծառայությունների, (մասնավորապես առողջապահական և կրթական հաստատությունների) զարգացմանը՝ առաջնահերթություն տալով մարդկանց կյանքի որակի բարձրացմանը: Այս պարագայում կարևոր են նաև հետիոտների համար հարմար ու հաճելի մայթերի, ինչպես նաև մշակութային կետերի ձևավորումը:

ՀԻՓՍԹԵՐԱԿԱՆ ՈՒՐԲԱՆԻԶՄ

18.8%

Ներդրումների մեծ մասը պետք է ուղղել տեխնոլոգիական զարգացմանը՝ առաջնահերթություն տալով «խելացի լուծումներին», տվյալների վերլուծությանը, արհեստական բանականությանը, որոնք պետք է օգտագործվեն տրանսպորտի, էներգիայի սպառման, թափոնների կառավարման, հանրային ծառայությունների օպտիմալացման համար:

ՄՈԴԵՌՆԻՍՏԱԿԱՆ ՈՒՐԲԱՆԻԶՄ

Ըստ տարիքային խմբի

ՄԻՆՉԵՎ 17	18-25	26-35	36 ԵՎ ԱՎԵԼ
17.2%	18.5%	22.1%	29.1%
65.6%	62.4%	60.4%	46.7%
17.2%	19.2%	17.5%	24.2%

Ըստ սեռի



ԵԹԵ ՏԵՂԱՓՈԽՎԵՔ ՆՈՐ ԹԱՂԱՄԱՍ, ԻՆՉԻ՞Ն ԿՏԱՔ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ

21.7%

Պատմական ժառանգություն և ավանդույթներ ունեցող ինքնատիպ թաղամաս, որտեղ իրար նման մարդիկ ապրում են սերտ հարևանային հարաբերություններով բակային միջավայրում:

ՆՈՐ ՈՒՐԲԱՆԻԶՄ

69.5%

Ժամանցի և հանգստի հանրային գոտիներ ունեցող թաղամաս, որտեղ տեղի բնակիչներն ու այցելուները առանց իրար վերահսկելու և/կամ խանգարելու բնակվում են և անցկացնում իրենց ժամանցը:

ՀԻՓՍԹԵՐԱԿԱՆ ՈՒՐԲԱՆԻԶՄ

8.8%

Առանձնացված նորակառույց բնակարանային համալիր, որտեղ բոլոր բնակիչները նոր են և առանձնապես իրար հետ չեն առնչվում:

ՄՈԴԵՌՆԻՍՏԱԿԱՆ ՈՒՐԲԱՆԻԶՄ

Ըստ հանրային տրանսպորտից օգտվելու հաճախականության



Ըստ զբաղվածության



ՄԻ ՔԱՆԻ ՏԱՍՆԱՄՅԱԿ Է, ԻՆՉ ՉԻ ԳՈՐԾՈՒՄ ՔԱՂԱՔԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՄԵԾ ՆԵՐՈՒԺ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ, ՈՐԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ ՌԻՍԿԱՅԻՆ Է ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՂՏՈՏՄԱՆ և ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ: ԸՍՏ ՁԵՋ, ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ Ո՞Ր ՌԱՁՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ Է ԱՌԱՎԵԼ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ

38.7%

Քանդել գործարանը՝ տարածքը վերածելով կանաչ գոտու, ինչը կբարելավի քաղաքի էկոլոգիան:

ՆՈՐ ՈՒՐԲԱՆԻԶՄ

38.1%

Չգործարկել գործարանը՝ դրա տարածքը վերածելով քաղաքաբնակներին հաճելի և հարմար ժամանցային ու առևտրային գոտիների, ինչը նաև շահույթ կբերի քաղաքին ու փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչներին:

ՀԻՓՍԹԵՐԱԿԱՆ ՈՒՐԲԱՆԻԶՄ

23.2%

Վերագործարկել գործարանը՝ նպաստելով քաղաքի տնտեսական աճին և ապահովելով աշխատատեղեր հազարավոր բնակիչների համար:

ՄՈԴԵՌՆԻՍՏԱԿԱՆ ՈՒՐԲԱՆԻԶՄ

Ըստ տարիքային խմբի

ՄԻՆՉԵՎ 17	18-25	26-35	36 ԵՎ ԱՎԵԼ
40.9%	36.2%	43.2%	36.4%
34.7%	40.5%	35.2%	35.8%
24.4%	23.3%	21.5%	27.9%

Ըստ զբաղվածության



ՆԵՐՔՈՆՇՅԱԼ ՆԿԱՐՆԵՐՈՒՄ ՊԱՏԿԵՐՎԱԾ Ո՞Ր ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՊՐԵԻՔ

57.9%

ՆՈՐ ՈՒՐԲԱՆԻԶՄ

38.7%

ՀԻՓՍԹԵՐԱԿԱՆ ՈՒՐԲԱՆԻԶՄ

3.4%

ՄՈԴԵՌՆԻՍՏԱԿԱՆ ՈՒՐԲԱՆԻԶՄ

Ըստ Երևանի վարչական շրջանների



Ըստ զբաղվածության